

Հայկ Ավետյան

*Երևան քաղաքի դատախազության դատախազ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, հայցորդ*

ԽՐԱԿԱՆՈՒՄԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ¹

Համառոտագիր

ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված խրախուսական նորմերը կրել են տարատեսակ փոփոխություններ: Նշվածի առնչությամբ առաջանում են մի շարք հարցեր: Նախ՝ ի՞նչ տեսակի նորմեր են խրախուսական նորմերը. դրանք լիարժեք, թե՞ ոչ լիարժեք նորմեր են, հանցավորությունը, թե՞ պատիժը վերացնող կամ սահմանող են, թե՞ անձի իրավական վիճակը բարելավող կամ վատթարացնող նորմեր են և այլն: Այս հարցերը ներկայումս ունեն խիստ արդիական պրակտիկ նշանակություն, քանի որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունմամբ հարց է առաջանում, թե կիրառման են ենթակա արարքի կատարման պահի՞ն գործած, թե՞, այնուամենայնիվ, ներկայումս գործող օրենսդրության համապատասխան, այդ թվում՝ խրախուսական նորմերը:

Նշված հարցադրումների պատասխանը ստանալու նպատակով, սույն հոդվածում ներկայացվում է խրախուսական նորմերի դերի, նշանակության, կառուցվածքի և տեսակային պատկանելության առնչությամբ գիտական տարբեր մոտեցումներ, ՀՀ վճարելի դատարանի մեկնաբանությունները, որոնց միջոցով հեղինակը հանգում է իր եզրակացություններին:

Արդյունքում՝ ընթերցողին կներկայացվի խրախուսական նորմի հստակ հասկացությունը, կառուցվածքը, այն, թե նորմի որ տեսակին են պատկանում խրախուսական նորմերը և, ի վերջո, ժամանակի ընթացքում այդ նորմերի գործողության առանձնահատկությունները:

Հիմնաբառեր - խրախուսական նորմ, հետադարձություն, Սահմանադրություն, սահմանադրականություն, վճարելի դատարանի իրավագործություն:

¹ Հոդվածը ներկայացվել է 17.05.2024 թ., գրախոսվել է 20.05.2024 թ.:

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտան քրեական արդարադատության ոլորտը կարգավորող հիմնական և անկյունաքարային երեք նոր օրենսգրքերը՝ քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական: Նշված օրենսգրքերը ներմուծեցին բազմաթիվ նոր ինստիտուտներ, ինչպես նաև առաջացրին նախկինում գոյություն ունեցած ինստիտուտների առանցքային փոփոխություններ:

Այսպես.

Նյութական իրավունքում ամբողջովին վերաձևակերպվեց մեղքի համակարգն իբրև քրեական իրավունքի կարևորագույն սկզբունք: Մասնավորապես, եթե 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ քրեական նախկին օրենսգիրք) որդեգրել էր դեռևս խորհրդային իրավունքում ընդունված մեղքի ընկալումն առ այն, որ դիտավորությունն ու անգոչուշությունը մեղքի ձևեր, տեսակներ էին, ապա ՀՀ քրեական նոր օրենսգիրքը որդեգրել է գերմանական իրավունքում մեղքին տրված մեկնաբանությունը, որի համաձայն՝ մեղքը արարքի հակաիրավականության գիտակցումն է և որևէ աղերս չունի արարքի փաստական հանգամանքների գիտակցման և հետևանքի առաջացման նկատմամբ անձի ունեցած վերաբերմունքին²: Բացի այդ, քրեական նոր օրենսգրքում ներմուծվել են ամբողջովին նոր պատժատեսակներ, ինչպես, օրինակ, ազատության սահմանափակումը:

Քրեադատավարական ընթացակարգային նորմերն ու ինստիտուտները ևս էական փոփոխություններ են կրել: Չորօրինակ՝ քրեական դատավարության փուլերից դուրս է բերվել քրեական գործի հարուցման փուլը, կամ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդման հարուցման լիազորությունը քննիչից հանձնվել է դատախազին:

Նման նորամուծություններն ու փոփոխությունները վերը նշված երեք օրենսգրքերում հանդիպում են գրեթե բոլոր հոդվածներում, ավելին՝ հազիվ թե գտնվեն իրավանորմեր, որոնք ուղղակիորեն կրկնում են միմյանց: Նշված հանգամանքով պայմանավորված՝ պրակտիկայում առավել հաճախ հանդիպող և վեճերի տեղիք ստանալու հարցը ժամանակի ընթացքում քրեաիրավական նորմերի գործողությունն է, երբ անձը պատժի սպառնալիքով արգելված արարքը կատարել է մինչև հիշատակված օրենսգրքերի ուժի մեջ մտնելը, սակայն վերջինիս նկատմամբ քրեաիրավական՝ նյութական կամ դատավարական նորմերը կիրառվում են արդեն նոր օրենսգրքերն ուժի մեջ մտնելուց հետո:

Սկզբում նշված փոփոխություններից են նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի հատուկ մասում նախատեսված հանցակազմերի, այսպես կոչված, խրախուսական նորմերը: Ընդ որում՝ առկա է այդպիսի փոփոխությունների երեք իրավիճակ.

² Головенков П. В., Уголовное Уложение Федеративной Республики Германия – Strafgesetzbuch (StGB). - Potsdam: Universitätsverlag, Potsdam, 2021, с. 45-46.

Նոր խրախուսական նորմեր, որոնք նախկինում գոյություն չունեին, օրինակ՝ **«Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու»** վերաբերյալ չ՛քրեական նախկին օրենսգրքի 325-րդ հոդվածը չէր նախատեսում խրախուսական նորմ, իսկ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած չ՛քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քրեական նոր օրենսգիրք) նույնական հանցագործություն նախատեսող 457-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է խրախուսական նորմ հետևյալ բովանդակությամբ՝ **«Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում ապաստան հայցողի վրա, որը փաստաթուղթը կեղծել կամ կեղծ փաստաթուղթն օգտագործել է Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու նպատակով:»**

Նախկինում առկա խրախուսական նորմերի վերացումներ, օրինակ՝ քրեական նախկին օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 3-րդ մասը ընտրակաշառք ստացող անձի համար. որոշակի պայմանների առկայության դեպքում նախատեսվում էր քրեական պատասխանատվությունից ազատման հնարավորություն: Նման խրախուսական նորմ քրեական նոր օրենսգրքով նախատեսված չէ:

Վերջապես, գոյություն ունեցող խրախուսական նորմերի պայմանների կամ բովանդակության փոփոխություն, օրինակ՝ զենքի ապօրինի շրջանառության վերաբերյալ հանցակազմ նախատեսող քրեական նախկին օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ հոդվածն ամրագրում էր հետևյալ խրախուսական նորմը՝ **«Սույն հոդվածում նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այդ հանցակազմ չեն պարունակում»:** Զրեական նոր օրենսգրքի նույնական հանցակազմ նախատեսող 335-րդ հոդվածի 4-րդ մասն արդեն նախատեսում է հետևյալ բովանդակությամբ խրախուսական նորմը՝ **«Սույն հոդվածում կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնած անձն ազատվում է սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այդ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»:** Ինչպես երևում է, նախկինում հանձնելը պետք է լիներ կամովին, իսկ նոր կարգավորմամբ ավելացել է «առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը» հատկանիշը:

Այսպիսով, չ՛քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված խրախուսական նորմերը կրել են տարատեսակ փոփոխություններ: Նշվածի առնչությամբ առաջանում են մի շարք հարցեր: Նախ՝ ի՞նչ տեսակի նորմեր են խրախուսական նորմերը, դրանք լիարժեք թե՛ ոչ լիարժեք նորմեր են, հանցավորությունը, թե՛ պատիժը վերացնող կամ սահմանող են, թե՛ անձի իրավական վիճակը բարելա-

վող կամ վատթարացնող նորմեր են և այլն: Այս հարցերը ներկայումս ունեն խիստ արդիական պրակտիկ նշանակություն, քանի որ նոր օրենսգրքերի ընդունմամբ, ինչպես վերը նշվեց, հարց է առաջանում, թե կիրառման են ենթակա արարքի կատարման պահի՞ն գործած, թե՞, այնուամենայնիվ, ներկայումս գործող օրենսդրության համապատասխան, այդ թվում՝ խրախուսական նորմերը:

Սույն հոդվածի շրջանակներում քննարկման առարկա են վերը նշված հարցերը, ուստի հաջորդիվ կներկայացվեն քրեական իրավունքի և իրավունքի տեսության մեջ առկա գիտական մոտեցումները, ինչպես նաև վերլուծության կենթարկվեն ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական մեկնաբանությունները: Նշվածի արդյունքում ընթերցողը հստակ պատկերացում կունենա խրախուսական նորմերի տեսակային պատկանելիության, դերի և նշանակության, ինչպես նաև ժամանակի ընթացքում դրանց գործողության և պրակտիկ կիրառության առնչությամբ:

1) Խրախուսական նորմերի կառուցվածքի, տեսակի և նշանակության մասին իրավագիտության մեջ առկա տեսակետները.

I. Հետխորհրդային իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումները

Հետխորհրդային քրեական իրավունքի գիտության մեջ խրախուսական նորմերի դերը, նշանակությունը և դրանց տեսակը չի ներկայացվում, այլ յուրաքանչյուր կոնկրետ հանցակազմի պարագայում մանրամասնվում է խրախուսական նորմի միջոցով քրեական պատասխանատվությունից ազատման պայմանները³:

Ընդհանրապես, թե՛ հայկական և թե՛ հետխորհրդային իրավունքի տեսության մեջ խրախուսական նորմերի վերաբերյալ հստակ և վերջնական հասկացություններ և մեկնություններ տրված չեն⁴:

Իրավաբանական գիտությունների թեկնածու Վոլկովան կարծում է, որ խրախուսական նորմերը կառուցվածքային իմաստով բաղկացած են դիսպոզիցիայից, հիպոթեզից և սանկցիայից⁵:

³ Տե՛ս, օրինակ, Журавлев М. П., Наумов А. В., и др., Уголовное право России. Части Общая и Особенная: учебник / под ред. А. И. Рарога. – 10-е изд., перераб. и доп. – Москва: Проспект, 2023. – с 686., Хомчик В. В., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Отв. ред. В. М. Лебедев. – 8-е изд., перераб. и доп. - Москва: Юрайт-Издат, 2008. – с 524., Костарова Т. А., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Изд. 2-е, изм. и доп. Под общей редакцией Генерального прокурора Российской Федерации, профессора Ю. И. Скуратова и Председателя Верховного Суда Российской Федерации В. М. Лебедева. – Москва, Издательская группа НОРМА–ИНФРА, 1998. – с. 501, Молчанов Д. М., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Ю. В. Грачева, Л. Д. Ермакова и др.; Отв. ред. А. И. Рарог. - Москва: ТК Велби, Изд-во Проспект, 2004. – с. 396, Գաբրիելյան Ա., ՀՀ քրեական իրավունք. հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն), դասագիրք ԲՈՒՀ-ի համար, ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ., էջ 533:

⁴ Волкова В.В., Поощрительные нормы: понятие, содержание, журнал «Право и практика», изд., АНО «Научно-исследовательский институт истории, экономики и права», номер 2, 2011, с. 77.

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 80:

Ընդ որում, որպես սանկցիա, նշված հեղինակը ներկայացնում է հետևյալը՝ «խրախուսական սանկցիան կարող ենք սահմանել որպես խրախուսանքի հատուկ տեսակ, ձև կամ միջոց՝ կախված կատարված արարքի բնույթից և օգտակարության աստիճանից»⁶:

Ի վերջո, իբրև սահմանում՝ Վոլկովան նշում է, որ խրախուսման նորմերը վարքի կանոններ են, որոնք ուղղված են օգտակար գործունեության խթանմանը, որ պարունակվում են իրավունքի տարբեր ճյուղերում և բնութագրվում են դրանք ստեղծող սուբյեկտների, ինչպես նաև տեսակների բազմազանությամբ⁷:

Իրավաբանական գիտությունների թեկնածու Վիկտորիա Պոպովան նշում է, որ խրախուսական նորմերն ունեն իրենց առանձնահատկությունները, դրանք երկանդամ են: Խրախուսական նորմի առաջին պարտադիր տարրը հիպոթեզն է, որը կազմում է արժանիքները որպես խթանների կիրառման հիմք՝ անհրաժեշտ կամ ցանկալի վարքագիծը բնութագրող տարրերի որոշակի խումբ (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ): Երկրորդը՝ սանկցիան, սուբյեկտների համար բարենպաստ հետևանքներ է ապահովում այս վարքագծի համար⁸:

Գորբուևովան, շարունակելով նշված տեսակետների տրամաբանությունը, նշում է, որ խրախուսման նորմի հիմնական կառուցվածքային առանձնահատկություններից մեկը հիպոթեզի և դիսպոզիցիայի «միաձուլումն» է: Այս համակցված մասում իմպերատիվ նորմերին բնորոշ որոշակի ձևով գործելու հրամանի փոխարեն ապահովված է խրախուսվող արդյունքի հասնելու իրավունքը: Այս տեսանկյունից խրախուսական նորմը կարող է դիտվել որպես դիսպոզիտիվ նորմի տեսակ, քանի որ այն չի պարտադրում սուբյեկտին կատարել այս կամ այն գործողությունը, այլ նրան հնարավորություն է տալիս ընտրելու վարքագծի տարբերակ՝ խոստանալով որոշակի պարգև (խրախուսում)՝ «ճիշտ» տարբերակն ընտրելու համար⁹:

Այսպիսով, վերը մեջբերված հեղինակների տեսակետները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

Նախ՝ վերջիններս խրախուսական նորմերը դիտում են որպես առանձին և ինքնուրույն, այլ կերպ ասած՝ լիարժեք նորմեր: Բացի այդ, այդ նորմերը վերջիններս դիտարկում են հիպոթեզ-դիսպոզիցիա-սանկցիա եռանդամ կառուցվածքով:

Նշվածի առնչությամբ հարկ է արձանագրել, որ քրեաիրավական խրախուսական նորմերը զետեղված են քրեական օրենսգրքի հատուկ մասի տարբեր հանցակազմերում և դրանց կիրառման հարցն առաջանում է միայն այն դեպքում, երբ սովյալ հանցակազմի պայմաններն առկա են: Օրինակ՝ քրեական նոր օրենսգրքի

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 82:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Попова В. В., Поощрительные нормы современного российского права: автореф. дис. Омск, 2015. с. 8.

⁹ Горбунова М. Ю., Поощрительные нормы права: особенности закрепления в российском законодательстве, научная сеть «Современное Право» № 12 – 2018, с. 17.

335-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է հետևյալ խրախուսական նորմը՝ «*Սույն հոդվածում կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնաձև անձն ազատվում է սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար*»: Նշված խրախուսական նորմի տեքստից պարզ է դառնում, որ նախ անհրաժեշտ է, որ անձը կատարած լինի ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ կամ 335-րդ հոդվածով նախատեսված որևէ հանցավոր արարք: Այլ կերպ ասած՝ 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմն ինքնին կիրառվել չի կարող, քանի դեռ առկա չէ 334-րդ կամ 335-րդ հոդվածով նախատեսված լիարժեք նորմի պայմանները: Այս պարզ տրամաբանությունը կասկածի տակ է դնում վերը մեջբերված հեղինակների այն պնդումը, թե խրախուսական նորմերը ինքնուրույն, առանձին և լիարժեք նորմեր են, որոնք բաղկացած են հիպոթեզից, դիսպոզիցիայից և սանկցիայից:

Այսպիսով, հետխորհրդային իրավաբանական-դոկտրինալ գրականության մեջ տարբեր հեղինակների կողմից խրախուսական նորմերին տրված, ըստ էության, նմանատիպ մեկնաբանությունները համոզիչ չեն, դրանք չեն բավարարում արդի գիտական զարգացումներին: Հաշվի առնելով նշվածը՝ անհրաժեշտ է քննարկել նորմի կառուցվածքի և տեսակների առնչությամբ արդի գիտական այլ մոտեցումներ, որից հետո միայն հնարավոր կլինի հանգել որոշակի հստակ եզրակացությունների սույն հոդվածի ներածության մեջ ներկայացված հարցերի առնչությամբ:

II. Խրախուսական նորմերը որպես իրավավերացնող ոչ լիարժեք իրավանորմեր.

Ա. Նորմերի կառուցվածքը

Իրավական նորմերի մեծ մասը կամ «ամբողջական» (լիարժեք) նորմերը¹⁰ կառուցված են **1. փաստակազմից** և **2. իրավական հետևանքից**¹¹:

Փաստակազմն իրավանորմում նկարագրված առանձին նախապայմանների ամբողջությունն է:

Իրավական հետևանքը փաստակազմի հետ կապված պարտականությունն է¹², այսինքն՝ թե փաստակազմի բոլոր նախապայմանների առկայության դեպքում ի՞նչ հետևանք պետք է վրա հասնի:

Փաստորեն, իրավանորմը, որպես կանոն, այնպես է կառուցված, որ փաստա-

¹⁰ Von Arnould, A., Norms and Narrative. German Law Journal, 18 (2), 2017, p. 320.

¹¹ Ռուբել Ռ., Պողոսյան Վ., ՀՀ ընդհանուր վարչական իրավունք, Երևան, 2011, էջ 202, Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, Երևան, 2020, էջ 161:

¹² Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, Երևան, 2020, նույն տեղում:

կազմի առկայությամբ պայմանավորվում է մի որոշակի իրավական հետևանք: **Եթե** առկա են փաստակազմի պայմանները, **ապա** սկզբունքորեն վրա է հասնում իրավական հետևանքը: Այսպիսով, իրավանորմերը կառուցված են «**եթե-ապա**» սխեմայով:

«**Եթե առկա է փաստակազմը** (դրա բոլոր նախապայմանները), **ապա վրա է հասնում իրավական հետևանքը**»¹³: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

Եթե որևէ անձ սպորինարար մեկ ուրիշին կյանքից զրկում է (ՓՍՍԱԿԱԶՄ), ապա պատժվում է ազատազրկմամբ՝ ոչօրից տասնհինգ տարի ժամկետով (ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔ):

Այսպիսով, **փաստակազմին** պատկանում է այն ամենը, ինչը վերաբերում է իրավական գնահատման ենթակա փաստական հանգամանքներին, որոնց համար գործում է մի որոշակի վարքի պահանջ:

Իրավական հետևանքին պատկանում է այն ամենը, ինչը վերաբերում է վարքի պահանջի բովանդակությանը¹⁴: Այսինքն՝ իրավական հետևանքը վարքի պահանջ է, որը կարող է ուղղված լինել պետությանը, հանրային իշխանությանը, մասնավոր անձանց, այն կարող է բարենպաստ կամ ոչ բարենպաստ լինել:

Հենց այս պատճառով հետխորհրդային երկրներին, այդ թվում՝ հայկական իրավունքին բնորոշ իրավանորմի եռանդամ կառուցվածքի «սանկցիա» տարրը չի արդարացվում, քանի որ իրավական հետևանքը բովանդակում է վարքի պահանջ, **միայն երբեմն սանկցիայի տեսքով, բայց ոչ բոլոր նորմերի դեպքում**: Իրավական հետևանքը կարող է լինել նաև բարենպաստ¹⁵:

Բ. Նորմերի տեսակները¹⁶

Լիարժեք իրավանորմեր են միայն օրենքի այն դրույթները, որոնք անմիջականորեն նախատեսում են կոնֆլիկտի լուծում: **Օրենքները լիարժեք իրավանորմերից բացի պարունակում են բազմաթիվ նորմեր, որոնք միայն լիարժեք դրույթների հետ համակցության մեջ են որևէ իրավական իմաստ արտահայտում**: Բանի որ դրանք պարունակում են հասկացությունների ճիշտ գործածման կամ լիարժեք իրավանորմի բովանդակությունը փոփոխելու վերաբերյալ սուսկ օրենսդրի հրահանգները, այսինքն՝ քանի որ դրանք ամեն դեպքում

¹³ Տե՛ս նույն տեղում:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 169:

¹⁵ Ավետյան Հ. Հ., Իրավական նորմի երկանդամ կառուցվածքի տեսությունը՝ «փաստակազմ, իրավական հետևանք», և իրավական հայեցողությունը, Բանբեր արդարադատության ակադեմիայի, Երևան, № 2 (6), 2021, էջ 36:

¹⁶ Մույն ենթագլխում (պարագրաֆում) նորմերի տեսակներն ամբողջությամբ ներկայացված են ըստ Հագենի Համալսարանի դոցենտ Գոռ Հովհաննիսյանի՝ սույն հղմամբ մեջբերված դասագրքի, ուստի առանձին յուրաքանչյուր դատողության վրա հղում չի կատարվել: Առավել մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, Երևան, 2020, էջեր 177-206:

վեճի լուծմանը նպաստում են միայն անուղղակի կերպով, կոչվում են ոչ լիարժեք իրավանորմեր: Իրավանորմերի ճնշող մեծամասնությունն այս իմաստով ոչ լիարժեք է: Քանի որ դրանք, բացի այդ, բովանդակում են իրավակարգավորումներ, որոնք որոշակի դեր են խաղում նույն օրենքի կամ նույնիսկ այլ օրենքների տարբեր դրույթների համար, ուստի ոչ լիարժեք իրավանորմերը իրավակարգի էական բաղադրիչներն են:

Իրավանորմերը կարելի է բաժանել՝

լիարժեք իրավանորմերի և

ոչ լիարժեք իրավանորմերի:

Ոչ լիարժեք իրավանորմերն իրենց հերթին բաժանվում են՝

պարզաբանող (լրացնող) իրավանորմերի,

բացառություններ կարգավորող իրավանորմերի,

ընդ որում, այս վերջին խումբ իրավանորմերը բաժանվում են՝

իրավախոչընդոտող նորմերի,

իրավավերացնող նորմերի,

իրավական հետևանքների իրականացումը խոչընդոտող նորմերի:

Ոչ լիարժեք իրավանորմեր են նաև **հղումները, ֆիկցիաները և ենթադրությունները:**

1) Լիարժեք իրավանորմեր

Լիարժեք իրավանորմերը պարունակում են և՛ փաստակազմի հատկանիշները, և՛ նորմի իրավական հետևանքում ամրագրված հրահանգները՝ այն սկզբունքային պահանջները, թե կոնֆլիկտների լուծման համար ինչ որոշում պետք է ընդունել, որոնք ուղղված են անձանց կամ պետությանը: Այս լիարժեք նորմերը փաստորեն հնարավորություն են ընձեռում բացառապես իրենց միջոցով լուծել մի որևէ կոնկրետ իրավական կոնֆլիկտ՝ առանց որևէ հավելյալ դրույթների անհրաժեշտության:

Օրինակ՝

«Քրեական օրենսգրքի հատուկ մասի 155-րդ հոդվածը, ըստ որի՝ եթե որևէ մեկը ապօրինաբար մեկ ուրիշին զրկում է կյանքից, ապա պետությունը նրան ենթարկում է պատժի՝ ութից տասնհինգ տարի ժամկետով ազատազրկման:

Փաստորեն նշված իրավանորմը պարունակում է փաստակազմի հատկանիշները (ապօրինաբար մեկ այլ անձի կյանքից զրկել) և իրավական հետևանքը (քրեական պատիժ), ընդ որում առանց որևէ այլ իրավանորմի «օգնության», այս նորմն ինքնին լուծում է մի կոնկրետ իրավական վեճ:

Այսպիսով, լիարժեք նորմերը միշտ այնպիսի իրավանորմեր են, որոնք որևէ իրավունք կամ պահանջ ներկայացնելու հնարավորություն են սահմանում: Նրանք ձևակերպում են «հիմնական փաստակազմը», որի հետ կապված է իրավական վեճի լուծման համար անհրաժեշտ «իրավական հետևանքը»:

2) Ոչ լիարժեք իրավանորմներ

Ոչ լիարժեք իրավանորմները լիարժեք իրավանորմները լրացնող կարգավորումներ են: Միայն ոչ լիարժեք նորմերի կիրառմամբ հնարավոր չէ ընդունել որոշում: Հետևաբար իրավակիրառառող չի կարող միայն ոչ լիարժեք իրավանորմների միջոցով գտնել կոնկրետ իրավական վեճի լուծումը: Ոչ լիարժեք իրավանորմները, սակայն, կարող են ազդել լիարժեք նորմի վրա: Հենց այդպես դրանք մասնակցում են իրավական վեճի լուծման եղանակի որոշմանը:

Ոչ լիարժեք իրավանորմներն ունեն տարբեր գործառույթներ: Որոշները պարզաբանում են լիարժեք նորմերի բովանդակությունը. «օժանդակում են» լիարժեք նորմերի բովանդակային ճշգրտմանը և այդ պատճառով էլ կոչվում են օժանդակ նորմեր: Այդ «օժանդակությունը», սակայն, օրենսդրական «առաջարկ» չէ, այլ պարտադիր է իրավակիրառողի համար: Ոչ լիարժեք այլ իրավանորմներ սահմանում են, որ պատասխան նորմով սկզբունքորեն նախատեսված կանոնը չպիտի գործի կամ պիտի գործի սահմանափակ ձևով: Այդ նորմերը պատճառ են դառնում, որ, չնայած առկա են պատասխան նորմի փաստակազմի բոլոր հատկանիշները, դրա իրավական հետևանքն ընդհանրապես կամ իր սկզբնական տեսքով չի գործում: Նման ոչ լիարժեք նորմերը, փաստորեն, հակադրվում են պատասխան նորմին, ուստի կոչվում են նաև հականորմեր:

• Պարզաբանող նորմեր (օժանդակ նորմեր)

Պարզաբանող կամ օժանդակ նորմերը լրացնում են այլ նորմերի՝ պահանջի հիմքերի կամ առարկությունների փաստակազմը: Այդ նորմերը մեծամասամբ գետեղված են օրենքի ընդհանուր մասում կամ օրենքի բաժիններից մեկի ընդհանուր դրույթներում:

Պարզաբանող կամ օժանդակ նորմերի առավել ցայտուն օրինակը սահմանող նորմերն են, որոնց միջոցով օրենսդիրը սահմանում է, թե մի կոնկրետ հասկացություն ինչ է նշանակում նույն օրենքի այլ իրավանորմներում:

• Բացառություններ կարգավորող նորմեր (հականորմեր)

Ինչպես արդեն իսկ վերը նշվեց, իրավանորմերը բաղկացած են փաստակազմից և իրավական հետևանքից: Եթե իրավանորմի փաստակազմի նախապայմաններն առկա են, ապա իրավական հետևանքը վրա է հասնում, սակայն իրավանորմի փաստակազմի հետ կապված իրավական հետևանքը վրա չի հասնում, չնայած փաստակազմի նախապայմանների առկայությանը, եթե օրենքում միաժամանակ կան դրան հակադրվող դրույթներ, այսինքն՝ երբ օրենսդիրը, կոնֆլիկտային իրավիճակների առանձնահատկությունները հաշվի առնելով, համապատասխան կարգավորումների միջոցով հնարավորություն է ստեղծում ամբողջությամբ կամ մասնակիորեն շեղվելու կոնֆլիկտի սկզբունքային լուծումից: Այսպիսով, երկեստային կարգավորումը միշտ գործում է այն վերապահմամբ, որ իրավակարգը ուրիշ կանոնների միջոցով բացառության կարգով այն սահմանափակել կամ վերացնել չի ցանկանում:

Այս բացատրությունները նախատեսող ոչ լիարժեք հականորմերն իրենց հերթին բաժանվում են երեք տեսակի՝ *իրավախոչընդոտող, իրավավերացնող և իրավական հետևանքների իրականացումը խոչընդոտող* նորմերը:

1. Իրավախոչընդոտող նորմեր

Իրավախոչընդոտող նորմերը (իրավախոչընդոտող առարկություններ) հականորմեր են, որոնք ի սկզբանե ամբողջությամբ կամ մասնակիորեն սահմանափակում են մեկ այլ իրավանորմի կիրառման ոլորտը, այնպես որ իրավունքն ընդհանրապես չի ծագում կամ ծագում է մասնակիորեն: Եթե անհրաժեշտ է հաշվի առնել իրավախոչընդոտող հականորմերը, ապա լիարժեք նորմի իրավական հետևանքը չի գործում կամ գործում է փոփոխված ձևով: Այս տեսակի հականորմերի մեծ մասը բերում է նրան, որ որևէ իրավունք (կամ պահանջ) ընդհանրապես չի ծագում:

2. Իրավավերացնող նորմեր

Իրավավերացնող նորմերը (իրավավերացնող առարկությունները) հականորմեր են, որոնք մի որևէ լիարժեք նորմի՝ սկզբում կիրառված իրավական հետևանքն ավելի ուշ բովանդակային իմաստով փոփոխում են կամ վերացնում, ընդ որում՝ հետադարձ ուժով ի սկզբանե (ex tunc) կամ «այս պահից սկսած» (ex nunc), այսինքն՝ հականորմի գործողության պահից սկսած: Այս տեսակի հականորմերի մեծ մասը հանգեցնում է նրան, որ այս կամ այն իրավունքը կրկին դադարում է:

Իրավավերացնող նորմերի ամենացայտուն օրինակ են քրեական պատասխանատվությունը վերացնող հիմքերը:

Դիցուք, ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «*Եթե անձը կանոնախախտություն է հանցագործությունից, ապա ազատվում է այդ հանցագործության համար քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այդ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:*»

Նույն օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ*»:

Այսինքն՝ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե իր կատարած հանցանքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է: Փաստորեն, այս նորմը ոչ լիարժեք նորմ է, քանի որ միայն այս նորմի կիրառմամբ կամ ինքնին այդ նորմի միջոցով հնարավոր չէ լուծել իրավական մի կոնկրետ վեճ, հնարավոր չէ միայն այս նորմով կայացնել որոշում, քանի որ նախ և առաջ անհրաժեշտ է մի լիարժեք

նորմի առկայություն, որպիսին այս դեպքում կարող է ծառայել ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված յուրաքանչյուր ոչ մեծ կամ միջին ծանրության հանցակազմ նախատեսող նորմ:

Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված միջին ծանրության հանցակազմը նախատեսում է՝ *«ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթուղիների անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթուղիության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անգոչությունը պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս»:*

Այս իրավիճակում նշված հանցանքը կատարած անձը չի ենթարկվի քրեական պատասխանատվության, եթե առաջին անգամ է հանցանք կատարել, և նրա ու տուժողի միջև առկա է համապատասխան համաձայնություն:

Այսպիսով, թեև հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու իրավական նորմը նախատեսված է ոչ թե օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանցակազմում, այլ նույն օրենսգրքի 82-րդ հոդվածում, սակայն այդ նորմը ոչ լիարժեք իրավավերացնող նորմ է, որն անհրաժեշտ է դիտարկել լիարժեք նորմի հետ համադրված, ինչպես վերը նկարագրվեց: Այլ կերպ՝ օրենսգրքի 82-րդ հոդվածի ոչ լիարժեք նորմը առանձին և ինքնուրույն որևէ իրավահարաբերություն չի կարող կարգավորել, ուստիև այն դիտարկման է ենթակա բացառապես մի որևէ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցակազմ պարունակով լիարժեք նորմի հետ համադրված: Ոչ լիարժեք այս նորմը կիրառելուց առաջ անհրաժեշտ է այն «միաձուլել» լիարժեք նորմին, որին լրացնելու համար այդ նորմը, ըստ էության, գոյություն ունի:

Ամբողջովին նույն իրավիճակն է խրախուսական նորմերի դեպքում, ուստի անհրաժեշտ է քննարկել այդպիսի մի քանի օրինակ:

ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածը նախատեսում է պետական դավաճանության հանցակազմը, որի խրախուսական նորմը նախատեսված է 424-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ *«Սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձն ազատվում է սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվությունից, եթե նա իրավասու մարմինների կամ միջին հայտնելով կամ այլ ձևով նպաստել է հետագա վնասը կանխելուն, եթե այդ վնասը կանխվել է: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»:*

Վերը նկարագրված եղանակով կարելի է համադրել պետական դավաճանության հանցակազմը նախատեսող լիարժեք նորմը դրա վերաբերյալ առկա խրախուսական ոչ լիարժեք իրավավերացնող նորմին:

Անձը ենթակա է քրեական պատասխանատվության պետական դավաճանություն կատարելու համար, եթե կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված երկրնորելի արարքներից մեկը, **բացառությամբ այն դեպքի, երբ այս հանցանքը կատարած անձը իրավասու մարմիններին կամ անվիճելի հայտներով կամ այլ ձևով նպաստել է հետագա վնասը կանխելուն, եթե այդ վնասը կանխվել է:**

Նույն «ստուգումը» կարելի է իրականացնել, օրինակ, հրազենի ապօրինի շրջանառությունը նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի և վերջինիս խրախուսական նորմի առնչությամբ:

Մասնավորապես՝ նշված հոդվածն ամբողջությամբ ունի հետևյալ ձևակերպումը.

«1. Ապօրինի կերպով հրազեն (բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենի, դրա փամփուշտների կամ դրա բաղկացուցիչ մասերի), դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածում կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնած անձն ազատվում է սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»:

Միացնելով սույն հոդվածի 1-ին և 4-րդ մասերով նախատեսված բուն հանցակազմը և դրա խրախուսական նորմը՝ կստացվի հետևյալ պատկերը.

Անձը ենթակա է քրեական պատասխանատվության ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ կրելու համար՝ **բացառությամբ այն դեպքի, երբ այս հանցավոր արարքներից մեկը կամ մի քանիսը կատարած անձը հանձնում է նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը:**

Ինչպես երևում է, ոչ լիարժեք նորմը միաձուլվում է լիարժեք նորմին և միմիային այդ ձևով է հնարավոր արտածել ոչ լիարժեք նորմի բովանդակությունը:

Այսպիսով, սույն վերլուծությունը վկայում է, որ խրախուսական նորմերը ոչ լիարժեք իրավավերացնող նորմեր են, որոնք ինքնուրույն կիրառվել չեն կարող, դրանք գործում են բացառապես այն լիարժեք նորմերի հետ համադրված, որոնց օժանդակելու համար հենց այդ խրախուսական նորմերը ստեղծված են:

2) Խրախուսական նորմերի և ժամանակի ընթացքում դրանց գործողության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումները

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ օրենքի միատեսակ կիրառման և իրավունքի զարգացման սահմանադրական գործառույթների իրականացման շրջանակներում բազմիցս անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հանցակազմերի խրախուսական նորմերին: Այդպիսի օրինակ է ապօրինի պահվող զինամթերքի հանձնմանն ուղղված խրախուսական նորմի առնչությամբ բարձր դատարանի մեկնաբանությունները:

Մասնավորապես, դեռևս 2008 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է ձևավորել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի առնչությամբ: Հարկ է արձանագրել, որ նշված որոշմամբ վճռաբեկ դատարանը չի պարզաբանել և չի ներկայացրել, թե նորմի տեսակներից որ մեկին է պատկանում խրախուսական նորմը, այն արդյո՞ք լիարժեք, թե ոչ լիարժեք նորմ է և այլն¹⁷: Ավելին, նշված որոշմամբ նաև չի բացահայտվում խրախուսական նորմերի բնույթը, նշանակությունը: Նշված որոշմամբ վճռաբեկ դատարանն անդրադարձել է միայն քննարկվող խրախուսական նորմի նախապայմաններին, մասնավորապես արձանագրելով, որ «(...) Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած այդ որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չի կարող համարվել կամովին: Այն դեպքերում, երբ իշխանությունները տեղյակ են կոնկրետ անձի մոտ նշված առարկաների առկայության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող (...)»¹⁸:

Հետագայում նույն խրախուսական նորմին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև 2015 թվականի դեկտեմբերի 18-ին կայացված որոշման մեջ, որտեղ արդեն բացահայտում է խրախուսական նորմերի հասկացությունն ու

¹⁷ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Հուսիկ Բաղդասարյանի վերաբերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշումը:

¹⁸ Նույն որոշման 20-րդ կետը:

նշանակությունը, մասնավորապես՝ «(...) ՀՀ քրեական օրենսգրքում առկա են նորմեր, որոնք կարգավորում են հանցագործություն կատարելուց հետո անձի կողմից դրանորս արգելափակում կատարելու համար անհրաժեշտ դեպքերում կատարվող միջոցառումները: Օրենսդրի կողմից հիշյալ հարաբերությունները կարգավորող նորմերը գետնադրված են ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 11-րդ գլխում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված առանձին հոդվածներում (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ, 200-րդ, 218-րդ, 223-րդ, 235-րդ, 299-րդ, 312-րդ, 327.1-րդ, 362-րդ և այլ հոդվածներ): Վկայակոչված նորմերն իրենց բնույթով խրախուսական նորմեր են, որոնք քրեորեն հետապնդելի արարք կատարած անձին առաջարկում են իրականացնել սոցիալական նշանակություն ունեցող որոշակի դրական վարքագիծ՝ նրա արարքը խթանելով խրախուսանքով: Այդ նորմերում սահմանվում են պահանջներ, որոնց իրականացման դեպքում հնարավոր է եզրակացնել, որ հանցագործություն կատարած անձը կորցրել է իր երբեմնի հանրային վտանգավորությունը, որի արդյունքում նպատակահարմար է այդ անձին ազատել քրեափրակական ներգործության միջոցներից, մասնավորապես՝ քրեական պատասխանատվությունից:

ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում առանձին հանցակազմերի առնչությամբ խրախուսական նորմերի նախատեսումն ինքնանպատակ չէ: Այն որոշակի բնույթի հանցագործությունների դեմ պայքարի յուրահատուկ միջոց է, որն ուղղված է դրանց խափանմանը կամ դրանց հետ կապակցված այլ հանցագործությունների կանխմանը կամ բացահայտմանը:

(...) Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված խրախուսական նորմը նպատակ ունի սպորինի պահվող զենքի և նորմում թվարկված մյուս առարկաների կամավոր հանձնումը խրախուսելու եղանակով դադարեցնելու ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարումը և այդպիսով կանխելու հետագայում դրանց հնարավոր գործարդմանը անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված կամ այլ հանցագործությունները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված արարքների հանրային վտանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանով նախատեսված առարկաները հանցավոր նպատակով օգտագործելու իրական հնարավորություն է ստեղծվում, ինչը վտանգ է առաջացնում մարդկանց կյանքի և առողջության համար: Հանցագործության օբյեկտի պահպանությունը, իսկ հանձնման կամավորության դեպքում՝ վերանում հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը (...)¹⁹»:

Այս որոշմամբ ևս, սակայն, բարձր դատարանը չի մատնանշել, թե ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանված խրախուսական նորմերը ինչ տեսակի նորմեր են:

¹⁹ ՀՀ վճարել նպատակով՝ Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի վերաբերյալ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՆԴ/0011/01/14 որոշման 33.1-ից 34-րդ կետեր:

Ինչպես նշվեց սույն հոդվածի ներածության մեջ, 2022 թվականին քրեական արդարադատության ոլորտը կարգավորող երեք առանցքային օրենսգրքերի փոփոխությամբ ժամանակի ընթացքում օրենքի գործողության առնչությամբ առաջացել են մի շարք հարցեր: Բացառություն չեն նաև ՀՀ քրեական օրենսգրքով ներկայումս որոշակի փոփոխություններ կրած խրախուսական նորմերը, մասնավորապես հենց զինամթերքի ապօրինի շրջանառությանը վերաբերող խրախուսական նորմը: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **«Սույն հոդվածում նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այդ հանցակազմ չեն պարունակում»:**

Այս նորմի նախապայմանների, հատկանիշների առնչությամբ, ինչպես վերը նշվեց, ՀՀ վճարեկ դատարանը իրավական դիրքորոշում էր արտահայտել՝ մասնավորապես նշելով, որ հանձնումը կհամարվի կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, սակայն, եթե իրավապահ մարմինները տեղյակ են կոնկրետ անձի մոտ նշված առարկաների առկայության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ արդեն այս խրախուսական նորմը ձեռք է բերել հետևյալ ձևակերպումը՝ **«Սույն հոդվածում կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնած անձն ազատվում է սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 334-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այդ հանցակազմ է պարունակում, սպա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»:**

Այսպիսով, ներկայումս, եթե նույնիսկ իրավապահ մարմինները տեղյակ են կոնկրետ անձի տիրապետության տակ գտնվող ապօրինի զենքի առկայության մասին, սակայն դրանց գտնվելու կոնկրետ վայրը չգիտեն, սպա հանձնումը, միևնույն է, կհամարվի կամովին, և անձը կազատվի քրեական պատասխանատվությունից, քանի որ օրենսդիրը բառացիորեն նշել է, որ եթե իրավասու մարմինները չգիտեն ապօրինի զինամթերքի պահման կոնկրետ տեղը, սպա անձը կարող է դրանք հանձնել և զերծ մնալ քրեական պատասխանատվությունից:

Հետևապես, այս խրախուսական նորմի առնչությամբ անձի իրավական վիճակը բարելավվել է, և այստեղ հարց է ծագում՝ եթե անձը մինչև քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը իր կամքով հանձնել է ապօրինի պահվող զինամթերք, որի մասին պետությունը տեղյակ էր, սակայն դրա գտնվելու կոնկրետ վայրը չգիտեր, անձն արդյոք ենթակա՞ է պատասխանատվության, թե՞ ոչ: Հենց այս առումով խիստ կարևոր նշանակություն ունի խրախուսական նորմերի տեսակը

որոշելու հարցը, քանի որ, եթե վարույթն իրականացնող մարմինը հանգի այն հետևության, որ այս դեպքում անձի իրավական վիճակի բարելավումը հանցավորությունը վերացնող օրենք է, ապա այն պետք է հետադարձ ուժով, առանց որևէ պայմանի կիրառվի անձի նկատմամբ, քանի որ «<< քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ»: Սակայն, եթե իրավասու մարմինը եզրակացնի, որ խրախուսական այս նորմը անձի իրավական վիճակը այլ կերպ բարելավող օրենք է, ապա այն ենթակա չի լինի կիրառման, քանի որ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «<<անցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով», իսկ այդպիսի կարգավորում օրենքով նախատեսված չէ:

Այս հարցի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել Միշա Մուրադյանի վերաբերյալ գործի շրջանակներում՝ 2022 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ:

• **Նշված որոշմամբ բարձր դատարանը նախ արձանագրել է**, որ նոր իրավակարգավորումների պայմաններում ապօրինի պահվող զինամթերքի հանձնմանն ուղղված խրախուսական նորմը անձի իրավական վիճակը բարելավող է, քանի որ «(...) եթե նախկին իրավակարգավորումների պայմաններում անձն ազատվում էր քրեական պատասխանատվությունից ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները կամովին հանձնելու դեպքում, ապա գործող իրավակարգավորումների դեպքում անձը կազատվի քրեական պատասխանատվությունից, եթե ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածում նշված առարկաները հանձնի մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին ինանալը:

(...) Այլևս էական նշանակություն չունի նաև զենքի գործադրմամբ որևէ արարք կատարած լինելու փաստը, եթե զենքը հանձնելու պահին իրավասու մարմինները դրա գտնվելու վայրի մասին դեռևս տեղեկություն չունեն: (...)»²⁰»:

Փաստորեն, վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ եթե նույնիսկ անձը զենքի գործադրմամբ հանցանք է կատարում, և դա հայտնի է վարույթն իրականացնող մարմնին, սակայն իրավասու մարմինները զենքի գտնվելու վայրի մասին դեռևս չգիտեն, և անձը հանձնում է այդ զենքը, ապա ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից, իսկ քրեական նախկին օրենսգրքի գործողության պայմաններում՝ նման իրավիճակում վերջինս չէր ազատվի քրեական

²⁰ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Միշա Մուրադյանի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ ԵԴ/1424/01/21 որոշման 14.1-ին կետ:

պատասխանատվությունից, քանի որ եթե իրավասու մարմինները տեղյակ էին, որ անձն այդ զենքի գործադրմամբ հանցանք է կատարել և ինչ-որ մի վայրում ապօրինի պահում է այն, ապա անկախ նրանից, որ իրավասու մարմինները զենքի գտնվելու կոնկրետ վայրը չգիտեն, միևնույնն է անձն այլևս խրախուսական նորմի ուժով ենթակա չէր քրեական պատասխանատվությունից ազատման: Ուստի, անձի իրավական վիճակի բարելավվումն այստեղ ակնհայտ է:

● **Հաջորդ հարցը, որ բարձր դատարանը մեկնել է,** այն է, թե ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը, որն անձի իրավական վիճակը բարելավող է, արդյոք հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող, թե՛ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք է²¹:

Այս համատեքստում վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ «(...) Հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող է համարվում այն օրենքը, որը չի վերացնում արարքի հանցավորությունը և չի մեղմացնում պատիժը, սակայն քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքերի և պայմանների հետ կապված՝ առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար: Եման իրավիճակները կարող են բազմազան լինել և վերաբերել քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի տարբեր ինստիտուտներին, այդ թվում՝ պատժի ժամկետները հաշվարկելու և պատիժը հաշվակցելու կարգին:

(...)

Վճռաբեկ դատարանի մեջբերված դիրքորոշումից հետևում է, որ նոր ընդունված քրեական օրենսդրությամբ հանցանք կատարած անձի համար քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքերի և պայմանների հետ կապված առավել նպաստավոր պայմանների նախատեսումը դիտարկվում է որպես հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք: Ընդ որում, եթե 2003 թվականի սպրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի հետադարձ ուժի հարցում որևէ սահմանափակում նախատեսված չէր, ապա ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի միայն օրենքով նախատեսված դեպքում: Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ քրեական օրենսգիրքը հետադարձ ուժով կիրառելու հնարավորություն նախատեսվել է միայն դատվածության մարման ժամկետների դեպքում՝ դատասպարտված անձի վիճակը բարելավող մասով (...):»

Փաստորեն, վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևություն, որ խրախուսական նորմերը, որոնք նոր օրենսդրությամբ ենթարկվել են փոփոխության և դրա արդյունքում անձի իրավական վիճակը բարելավվել են, ապա դրանք հանցա-

²¹ Տե՛ս նույն որոշման 16-րդ կետը:

վորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենք չեն, այլ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքերի և պայմանների հետ կապված առավել նպաստավոր պայմաններ են նախատեսում, ուստի դրանք հարկ է դիտարկել որպես հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք:

• **Երրորդ հարցը, որ բարձր դատարանը վերլուծել է, հետևյալն է:** Արդյոք ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը, որպես անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող օրենք, պիտի ունենա՞ հետադարձ ուժ, թե՞ ոչ:

Այս հարցը վերլուծելիս վճռաբեկ դատարանը սկզբում հստակ արձանագրել է, որ քանզի խրախուսական նորմերը, որոնք անձի իրավական վիճակը բարելավում են, համարվում են անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող նորմեր, ուստի դրանց չի կարող հետադարձ ուժ տրվել, քանի որ օրենքով նման հնարավորություն չի նախատեսվել²²: Այնուհետև, վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այդ կարգավորումը չի կարող համահունչ լինել ինչպես քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքներին, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներին²³:

Մինչ վճռաբեկ դատարանի՝ քննարկվող որոշմամբ ներկայացված հետագա մեկնաբանություններին անդրադառնալը, անհրաժեշտ է պարզել, թե այն դեպքում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանը որևէ օրենք կամ օրենքի առանձին դրույթ համարում է հակաիրավական կամ ՀՀ վավերացրած միջազգային կոնվենցիային հակասող, ապա ինչ քայլեր պետք է ձեռնարկի:

ՀՀ սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ սույն գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով»:*

Այսպիսով, եթե վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, համաձայն որի անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող օրենքն ունի հետադարձ ուժ միայն այն դեպքում, երբ դա նախատեսված է օրենքով, հակասում է իրավական սկզբունքներին, ընդ որում՝ անհասկանալի է, թե կոնկրետ որ սկզբունքներին է հակասում և ինչու, և ՄԻԵԿ 7-րդ հոդվածին, ապա ինքնին հասկանալի է, որ ըստ վճռաբեկ դատարանի տրամաբանության՝ այն հակասում է նաև ՀՀ սահմանադրությանը, քանի որ ՄԻԵԿ համապատասխանությունը ՀՀ մայր օրենքին ստուգված է, բացի այդ ՀՀ սահմանադրությունը ընդգրկում է բոլոր հիմնարար իրավական

²² Տե՛ս նույն որոշման 17-րդ կետը:

²³ Տե՛ս նույն տեղում:

սկզբունքները: Այսպիսով, նման պայմաններում վճռաբեկ դատարանի դատավորները կամ առնվազն նրանցից մեկը պարտավոր էին դիմել սահմանադրական դատարան, քանի որ իրենք հիմնավոր կասկածներ ունեին ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցով:

Այնուամենայնիվ, ՀՀ վճռաբեկ դատարանը մեկնաբանել և իրավական դիրքորոշում է արտահայտել մի դրույթի առնչությամբ, որն ինքը համարում է հակաիրավական և հակակոնվենցիոնալ, ուստիև հակասահմանադրական:

Ի վերջո, վճռաբեկ դատարանը, շարունակելով մեկնաբանությունը, ավելացրել է, որ «(...) պատիժը մեղմացնող օրենսդրությանը հետադարձ ուժ տալու պահանջը հավասարապես պետք է կիրառելի լինի նաև քրեական պատասխանատվությունից անվերապահ ազատում նախատեսող նորմերի պարագայում: Մասնավորապես, եթե օրենսդիրը եզրափակիչ դատավարական ակտի բացակայության պայմաններում երաշխավորել է պատիժը մեղմացնող քրեական օրենսդրությանը հետադարձ ուժ տալու հնարավորությունը՝ առանց որևէ բացառության, սապա վերոնշյալն առավել ևս պետք է կիրառելի լինի՝ իր բովանդակությամբ և ծավալով ավելի լայն և հանդիմարկուն երևույթի՝ քրեական պատասխանատվությունից ազատելու նկատմամբ:

Հակառակ պարագայում կատացվի, որ քրեական պատասխանատվության բաղադրիչ հանդիսացող պատժի մեղմացման ցանկացած դեպքում քրեական օրենքը հետադարձ ուժ ունի (...), մինչդեռ քրեական պատասխանատվությունից անվերապահ ազատում նախատեսող նոր օրենքի պարագայում պետք է կիրառվեն արարքի կատարման պահին գործող կարգավորումները, և անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ու պատժի, ինչն անընդունելի է (...)»²⁴:

Այսպիսով, ամբողջացնելով ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի և դրա՝ ժամանակի ընթացքում գործողության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունը, կարելի է հետևյալ եզրահանգումն անել.

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի.

- Քրեական նոր օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը, համեմատած քրեական նախկին օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի, անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող նորմ է:
- Քրեական նոր օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով, ընդ որում՝ խրախուսական որևէ նորմի առնչությամբ այդպիսի կանոն օրենքով նախատեսված չէ, սակայն այդ կարգավորումը իրավական սկզբունքների և մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային հակասող է:

²⁴ Տես՝ Նույն որոշման 19-րդ կետը:

- Բացի այդ, քրեական նոր օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը, որպես քրեական պատասխանատվությունից ազատող իմպերատիվ նորմ, հարկ է դիտարկել իբրև պատիժը մեղմացնող օրենք և այդպիսով դրան տալ հետադարձ ուժ:

Եզրակացություն

Ամփոփելով խրախուսական նորմերի առնչությամբ նախորդիվ իրականացված վերլուծությունները՝ նախ անհրաժեշտ է ձևակերպել խրախուսական նորմերի հասկացությունը.

Քրեական օրենսգրքի հատուկ մասի հանցակազմերի խրախուսական նորմերը ոչ լիարժեք իրավավերացնող նորմեր են, որոնք խրախուսում են հանցանք կատարած անձին որոշակի իրավահպատակ վարքագիծ դրսևորելու միջոցով ազատվել քրեական պատասխանատվությունից:

Խրախուսական այս ոչ լիարժեք նորմերը ինքնին իրավահարաբերություն առաջացնել կամ դադարեցնել չեն կարող, դրանք կենսագործվում են բացառապես քրեական օրենսգրքի՝ հանցակազմ պարունակող լիարժեք նորմերի միջոցով, ուստի խրախուսական նորմերը հնարավոր չէ կառուցվածքային առումով դիտարկել լիարժեք նորմերից անջատ: Ինչպես վերը ներկայացվեց, դիցուք ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի և դրա խրախուսական նորմի համադրության արդյունքում կարելի է ստանալ մի լիարժեք նորմ՝ հետևյալ ձևակերպմամբ.

«Անձը ենթակա է քրեական պատասխանատվության ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ կրելու համար՝ բացառությամբ այն դեպքի, երբ այս հանցավոր արարքներից մեկը կամ մի քանիսը կատարած անձը հանձնում է նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը:»

Հետևապես, եթե որևէ խրախուսական նորմ նոր օրենսդրությամբ ենթարկվել է փոփոխությունների և անձի իրավական վիճակն այդպիսով բարելավվել է, օրինակ՝ ապօրինի պահվող զինամթերքի հանձնմանն առնչվող խրախուսական նորմի փոփոխությունը, ինչն արդեն իսկ մասնրամասն վերլուծվեց, ապա այն հարկ է դիտարկել որպես հանցավորությունը մասնակիորեն վերացնող նորմ: Այս պնդումը հիմնավորվում է նրանով, որ հանցավոր համարվող արարքների շրջանակն այդպիսով նեղանում է: Եթե նախկինում իրավասու մարմինները տեղյակ էին, որ անձն ինչ-որ վայրում հրազեն է պահում կամ դրանով հանցանք է կատարել, ապա եթե նույնիսկ հետագայում այդ անձը հանձնելը հրազենը, միևնույնն է, չէր ազատվի պատասխանատվությունից, սակայն ներկա կարգավորումների պարագայում այդ անձը կազատվի պատասխանատվու-

թյունից, քանի որ իրավասու մարմինները չգիտեն այդ հրազենի գտնվելու կոնկրետ վայրը:

Հակառակ պարագայում, ինչպես մեկնաբանել է ՀՀ վճռաբեկ դատարանը, ստացվում է, որ ոչ լիարժեք իրավավերացնող խրախուսական նորմը դիտարկվում է լիարժեք հանցակազմ պարունակող նորմից անջատ, և որպես առանձին, ինքնին իրավահարաբերություն կարգավորող նորմ՝ համարվում է անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող կամ պատիժը վերացնող նորմ, ինչը հակասում է ոչ լիարժեք նորմերի վերաբերյալ արդի իրավագիտության մեջ առկա մոտեցումներին, քանի որ ոչ լիարժեք նորմն ինքնին չի կարող մի կոնկրետ որոշում կայացնելու համար բավարար լինել, այն օժանդակում, լրացնում է լիարժեք նորմին կամ նորմերին, ուստի լիարժեք նորմի հետ համադրման արդյունքում պետք է որոշվի այդ ոչ լիարժեք նորմի հետադարձ ուժով կիրառելու հարցը: Հետևաբար, այս հարցի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները հակասում են արդի իրավագիտության մեջ նորմի տեսակների վերաբերյալ առկա մոտեցումներին:

Այսպիսով, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ոչ լիարժեք, իրավավերացնող խրախուսական նորմը նույն հոդվածի 1-ին մասի լիարժեք նորմին լրացնելու արդյունքում, հանցավորությունը մասնակիորեն վերացնող նորմ է և ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է ունենա հետադարձ ուժ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. 2015 թվականին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրություն
The Constitution of the Republic of Armenia entered into force in 2015
2. 2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրք
The Criminal Code of the Republic of Armenia entered into force in 2022
3. 2003 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրք
The Criminal Code of the Republic of Armenia entered into force in 2003
4. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Միշա Սուրադյանի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ ԵԴ/1424/01/21 որոշումը
Decision of the RA Court of Cassation No. ED/1424/01/21 of November 22, 2022 regarding Misha Muradyan
5. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի վերաբերյալ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՆԴ/0011/01/14 որոշումը
Decision of the RA Court of Cassation No. YAND/0011/01/14 of December 18, 2015 regarding Hrant Harutyunyan and Beglar Hovhannisyanyan
6. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Հուսիկ Բաղդասարյանի վերաբերյալ 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշումը:
Decision of the RA Court of Cassation No. AVD2/0059/01/08 of November 28, 2008 regarding Husik Baghdasaryan.
7. Գաբուզյան Ա., Ղազինյան Գ. և այլք, ՀՀ քրեական իրավունք, հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն), դասագիրք ԲՈՒՀ-ի համար, ԵՊՀ հրատ., Երևան, 2012 թ.:
Gabuzyan A., Ghazinyan G. and others “Criminal law of the Republic of Armenia, special part” (sixth edition), textbook for the University, YSU publishing house, Yerevan, 2012.
8. Ռուբել Ռ., Պողոսյան Վ., ՀՀ ընդհանուր վարչական իրավունք, Երևան, 2011 թ.:
Rubel R., Poghosyan V., RA General Administrative Law, Yerevan 2011.
9. Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, Երևան, 2020 թ.:
Hovhannisyanyan G., General Jurisprudence and Legal Methodology, “Public Diplomacy” charitable NGO, Yerevan 2020.
10. Ավետյան Հ., Իրավական նորմի երկանդամ կառուցվածքի տեսությունը՝ «փաստակազմ, իրավական հետևանք», և իրավական հայեցողությունը, Բանբեր արդարադատության ակադեմիայի, Երևան, № 2 (6), 2021 թ.:
Avetyan H., Theory of the Bipartite Structure of the Legal Norm: “Corps of Facts,

- Legal Consequence” and Legal Discretion, Banber Academy of Justice, Yerevan, № 2 (6), 2021.
11. Von Arnould, A., Norms and Narrative. *German Law Journal*, 18 (2), 2017.
 12. Головненков П.В. Уголовное Уложение Федеративной Республики Германия – Strafgesetzbuch (StGB). - Potsdam: Universitätsverlag, Potsdam, 2021.
Golovnenkov P.V. Criminal Law of the Federal Republic of Germany – Strafgesetzbuch (StGB). - Potsdam. Universitätsverlag, Potsdam, 2021.
 13. Журавлев М. П., Наумов А. В., и др., Уголовное право России. Части Общая и Особенная: учебник / под ред. А. И. Рарога. — 10-е изд., перераб. и доп. — Москва: Проспект, 2023.
Zhuravlev M.P., Naumov A.V., et al., Criminal law of Russia. Parts General and Special: textbook / ed. A. I. Raroga. — 10th ed., revised. and add. — Moscow: Prospekt, 2023.
 14. Хомчик В. В., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Отв. ред. В. М. Лебедев. — 8-е изд., перераб. и доп. - Москва: Юрайт-Издат, 2008.
Khomchik V.V., Commentary on the Criminal Code of the Russian Federation / Rep. ed. V. M. Lebedev. — 8th ed., revised. and add. - Moscow: Yurayt-Izdat, 2008.
 15. Костарова Т. А., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Изд. 2-е, изм. и доп. Под общей редакцией Генерального прокурора Российской Федерации, профессора Ю. И. Скуратова и Председателя Верховного Суда Российской Федерации В. М. Лебедева. — Москва, Издательская группа НОРМА—ИНФРА, 1998.
Kostarova T. A., Commentary on the Criminal Code of the Russian Federation. Ed. 2nd, rev. and add. Under the general editorship of the Prosecutor General of the Russian Federation, Professor Yu. I. Skuratov and the Chairman of the Supreme Court of the Russian Federation V. M. Lebedev. - Moscow, Publishing group NORMA-INFRA, 1998.
 16. Молчанов Д. М., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Ю. В. Грачева, Л. Д. Ермакова и др.; Отв. ред. А. И. Рарог. - Москва: ТК Велби, Изд-во Проспект, 2004.
Molchanov D. M., Commentary on the Criminal Code of the Russian Federation / Yu. V. Gracheva, L. D. Ermakova and others; Rep. ed. A. I. Rarog. - Moscow: TK Welby, Prospekt Publishing House, 2004.
 17. Волкова В.В., Поощрительные нормы: понятие, содержание, журнал «Право и практика», изд., АНО «Научно-исследовательский институт истории, экономики и права», номер 2, 2011.
Volkova V.V., Incentive norms: concept, content, magazine “Law and Practice”,

- ed., ANO “Research Institute of History, Economics and Law”, number 2, 2011.
18. Попова В.В., Поощрительные нормы современного российского права: автореф. дис. Омск, 2015.
Popova V.V., Incentive norms of modern Russian law: abstract. dis. Omsk, 2015.
19. Горбунова М.Ю., Поощрительные нормы права: особенности закрепления в российском законодательстве, научная сеть «Современное Право» № 12 – 2018.
Gorbunova M.Yu., Incentive norms of law: features of consolidation in Russian legislation, scientific network “Modern Law” No. 12 – 2018.

Hayk Avetyan

*Prosecutor of the Prosecutor's Office of Yerevan City,
Lecturer and Ph.D. Degree Applicant at the Chair of
Criminal Law of Faculty of Law of Yerevan State University*

THE CONCEPT, AND THE STRUCTURE OF THE INCENTIVE NORMS, AND THE CONSEQUENCES OF THEIR CHANGES OVER TIME¹

Abstract

The incentive norms provided by the special part of the Criminal Code of the Republic of Armenia have undergone various changes. A number of questions arise in connection with the mentioned. First of all, what kind of norms are incentive norms, are they complete or incomplete norms, are they eliminating or determining criminality or punishment, are they norms improving or worsening the legal status of a person, etc. These issues currently have a very topical practical significance, because with the adoption of the new Criminal Code of the Republic of Armenia, which came into force on July 1, 2022, the question arises as to whether they are applicable at the time of the act, or in accordance with the current legislation including incentives norms.

In order to get the answers to the mentioned questions, this article introduces various scientific approaches regarding the role, meaning, structure and type of incentive norms, the comments of the RA Court of Cassation, through which the author reaches his conclusions.

As a result, the reader will be presented with a clear concept of the incentive norm, its structure, which type of norm the incentive norms belong to, and finally, the specifics of the operation of these norms over time.

Keywords: incentive norm; retroactivity; Constitution; constitutionality; authority of the cassation court.

¹ The article was presented on 17.05.2024 and was reviewed on 20.05.2024.

Айк Аветян

*Прокурор прокуратуры города Ереван, преподаватель и
соискатель кафедры уголовного право юридического факультета
Ереванского государственного университета*

ПОНЯТИЕ, СТРУКТУРА ПООЩРИТЕЛЬНЫХ НОРМ И ПОСЛЕДСТВИЯ ИХ ИЗМЕНЕНИЯ ВО ВРЕМЕНИ¹

Абстракт

Поощрительные нормы, предусмотренные особенной частью Уголовного кодекса Республики Армения, претерпели различные изменения. В связи с указанным возникает ряд вопросов. Прежде всего, какие нормы являются поощрительными, являются ли они полноценными или неполноценными, устраняют или определяют преступность или наказание, являются ли они нормами, улучшающими или ухудшающими правовое положение человека и т. д. Эти вопросы в настоящее время имеют весьма актуальное практическое значение, поскольку с принятием нового Уголовного кодекса Республики Армения, вступившего в силу с 1 июля 2022 года, возникает вопрос о том, применимы ли они, в том числе: Поощрительные нормы, на момент совершения деяния, либо в соответствии с действующим законодательством.

Для получения ответов на упомянутые вопросы в данной статье представлены различные научные подходы относительно роли, значения, структуры и вида норм стимулирования, комментарии Кассационного суда РА, на основании которых автор приходит к своим выводам.

В результате читателю будет представлена четкая концепция о поощрительной норме, ее структуре, к какому типу норм относятся поощрительные нормы и, наконец, об особенностях действия этих норм во времени.

Ключевые слова: поощрительные нормы; обратная сила; Конституция; конституционность; правомочие кассационного суда.

¹ Статья была представлена 17.05.2024 и прошла рецензирование 20.05.2024.